



Կառավարության հաստատմանը կներկա- յացվի «Խոսրովի անտառ» արգելոցի կառավարման նոր ոլլանը

ԼԼ բնապահպանության նախարար Արծվիկ Սինա- սյանն աշխատանքային այցով եղել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում: Կարճատև շրջայցից հետո, ՊՈԱԿ-ի վարչական շենքում գտնվող թանգարանում բնապահպանության նախարարը գերատեսչության պատասխանատուների հետ մեկնել է արգելոցի հրդեհից վնասված տարածքներ, շրջել մի քանի տեղամասերում, որտեղ մասնագետներն արձանագրել են բնության ինքնավերականգնման ակնառու փաստեր: «Խոսրովի անտառ» պետական արգելոց՝ ՊՈԱԿ-ի տնօրեն Հրայրա Հովակիմյանն աշխատանքային խմբին, WWF-Հայաստան, CNF կազմակերպությունների ղեկավարներին և լրագրողներին հայտնել է, որ կրակի արագ տարածման հետևանքով շատ բույսերի արմատները չեն վնասվել, ինչը փաստում են համատարած ինքնավերականգնման մասին, իսկ կենդանական աշխարհից արձանագրվել է միայն մորեխների և մրջյունների վնասման դեպքեր: Աշխատանքային խմբի անդամները և վերջիններիս ուղեկցող լրագրողները տեղում տեսել են արգելոցի մոտակայքում ապրող բնակչին՝ գյուրգա տեսակի օձ վնասագերծելիս:

Նախարարը, պատասխանելով լրագրողների հարցերին, նշել է, որ արգելոցում իրականացվում են լայնամասշտաբ բարեփոխումներ: Մասնավորապես՝ կառուցվածքային փոփոխությունների շրջանակներում կծնավորվի ուղեփակոցային հսկողության ծառայություն՝ մուտքի սահմանված ռեժիմն լիարժեք ապահովելու համար, երկրորդը՝ ստեղծվելու է արագ արձագանքման խումբ, որը որսագողության և տարերային աղետների դեմ պայքարի արագ միջոցառումներ կիրականացնի և երրորդ՝ կծնավորվեն ըստ տեղամասերի ծառայություններ, որոնք առանձին-առանձին կիրականացնեն արգելոցային ռեժիմի պահպանման և մոնիթորինգի աշխատանքները: Նախատեսվում է իրականացնել հակահրդեհային համալիր միջոցառումներ՝ տեխնիկական համապատասխան սարքերով արգելոցը զինելուց մինչև ջրագծերի միջոցով արգելոցի որոշ տարածքներից ջուրն առավել ջրագուրկ հատվածներ հասցնելը:

• Կառավարության հաստատմանը կներկայացվի «Խոսրովի անտառ» արգելոցի կառավարման նոր ղյալանը

Սկիզբը էջ 1 |

Բարեփոխումների շրջանակում մշակվում է և առաջիկայում ՀՀ կառավարության հաստատմանը կներկայացվի արգելոցի կառավարման նոր ղյալանը, որով լուծվելու են սկզբունքային մի շարք հարցեր, մասնավորապես՝ ամբողջացվելու են արգելոցի սահմանները, քանի որ դրանց ներկայիս հատվածական բնույթը խոչընդոտում է լիարժեք պահպանությանը, արգելվելու է նաև արգելոցին մոտ որսահանդակների առկայությունը՝ բացառելով հավանականությունը, որ այդ հատվածներում որսի թիրախ դառնան նաև արգելոցից դուրս եկած կենդանիները: Նախարարը տեղեկացրել է, որ արգելոցի խնդիրների լուծմանը կուղղվեն դրամաշնորհային և հիմնադրամների կողմից հատկացվող մասնավոր նվիրատվությունները: Սակայն Արծվիկ Մինասյանն առաջնային է համարել հասարակության մոտ բնապահպանական գիտակցության և մշակույթի ձևավորումը, առանց որի, ինչքան էլ լավ աշխատեն պետական պատասխանատու կառույցները, հնարավոր չէ արդյունավետորեն պահպանել շրջակա միջավայրի էկոնվտանգությունը: Անդրադառնալով հրդեհի բռնկման պատճառների մասին հարցին՝ Ա.Մինասյանը հայտնել է, որ ԱՄՆ կառավարության տրամադրած արբանյակային լուսանկարներից երևում է, որ հրդեհի բռնկումն արձանագրելուց մի քանի ժամ անց առկա է եղել 3 օջախ, որոնք միմյանցից հեռու են 3-4 կիլոմետր, ինչը բնական երևույթներով չէր կարող պայմանավորված

լինել, իսկ մարդու միջամտության միտումնավոր, թե պատահական լինելը կարող է պարզել միայն հետաքննությունը: Շրջայց կատարելիս Արծվիկ Մինասյանը հետևել է «Խոսրովի անտառ» պետական արգելոցի ինքնատիպ բնաշխարհը կտավին հանձնելու նպատակով արգելոցում նկարող ՀՀ նկարիչների միության անդամ տասը նկարիչների աշխատանքներին, զոհունակությամբ նկատել, որ վերջիններս իրենց աշխատանքներով մեծապես օգնում են հասարակության շրջանում բնության հանդեպ սիրո և հոգատարության սերմանմանը և բնապահպանական մշակույթի ձևավորմանը: ՀՀ բնապահպանության նախարարը ծանոթացել է նաև արգելոցի կարողությունների ուժեղացման նպատակով միջազգային կազմակերպությունների տրամադրած սարքավորումներին և վերագրած հրշեջ մեքենային: Վերջինս վերագրվել է սարքին վիճակի էր բերվել բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ: Նման մեքենայի անհրաժեշտությունը զգացվել էր օգոստոսի 12-ին բռնկված հրդեհի տարածումը կանխելու և ընդհանրապես, բնական աղետի դեմ պայքարելու ժամանակահատվածում: Բնապահպանության նախարարը նշել է, որ արգելոցի տեխնիկական վերագինման աշխատանքներին զուգահեռ առաջիկայում պահպանվող տարածքը կապահովվի օդային կապով, ինչը կնպաստի արագ արձագանքման և մոնիթորինգի աշխատանքներին:

Հայկական Էկոգյուղեր միջազգային չափանիշներով

Ընապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը հանդիպել է Էկոգյուղերի գլոբալ ցանցի գործադիր տնօրեն Կոչա Անջա Ջոուբերտին և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության հիմնադրամի նախագահ Ռուբեն Խաչատրյանին, ում հրավերով հյուրը Հայաստան է ժամանել Արևոդիե միջազգային բնապահպանական 7-րդ փառատոնին մասնակցելու նպատակով:

Խաչիկ Հակոբյանը ողջունելով Էկոգյուղերի գլոբալ ցանցի գործադիր տնօրենին՝ հայտնել է Հայաստանի կառավարության, ի դեմս ՀՀ բնապահպանության նախարարության, պատրաստակամությունը մասնակցելու Էկոգյուղերի գլոբալ ցանցի ծրագրերին. «Հայկական համայնքներն Էկոգյուղերի միջազգային չափանիշներին համապատասխանեցնելն առաջնային նշանակություն ունի բնապահպանական խնդիրների լուծման և մշակույթի ձևավորման գործընթացում»: Նախարարի տեղակալն առաջնային է համարել նաև բնության հատուկ պահպան-



վող տարածքների /ԲՀՊՏ/ հարակից համայնքներում ծրագրի իրականացումը, ինչի արդյունքում կխթանվի օրգանական արտադրությունը, որն իր հերթին նվազագույնի կհասցնի ճնշումը ԲՀՊՏ-ների վրա: Էկոլոգիապես մաքուր արտադրանքի ծավալների մեծացումն իր հերթին կնպաստի համապատասխան շուկայի ձևավորմանը: Կոչա Անջա Ջոուբերտին ներկայացրել է Էկոգյուղերի գլոբալ ցանցի ծավալած գործունեությունը և շեշտել, որ Էկոգյուղերի կայացման գործում առաջնայնությունը տրվում է համայնքների ինքնակառավարմանը և սեփական նախաձեռնությամբ որոշումների ընդունման արդյունքում էկոլոգիական անհրաժեշտ փոփոխությունների ապահովումը: Կողմերը պայմանավորվել են համագործակցության շրջանակներում իրականացնել գործնական ծրագրային քայլեր Հայաստանում Էկոգյուղերի ցանց ձևավորելու ուղղությամբ:

Անսառն ամօրենի հասողները կկանգնեն օրենքի առջև. ուժեղացված դայֆարն այլընտրանք չունի



Նախարար Արծվիկ Սինասյանն աշխատանքային այցով եղել է ՀՀ Տավուշի մարզում: «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գրասենյակում հրավիրված աշխատանքային խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ Տավուշի դատախազ Վիկտոր Գրիգորյանը, Դիլիջան միավորված համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանը, «Պանտերա սեքյուրիթի» պահնորդական ընկերության տնօրեն Վահե Դարբինյանը, ՀՀ ԲՆ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Եղիշ Տերտերյանը, «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրեն Արմեն Աբրահամյանը, ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի և տարածքային ստորաբաժանումների ներկայացուցիչներ: Իր խոսքում նախարարը նշել է, որ դեռ նախորդ տարի ազգային պարկում մեկնարկած և մի քանի ամիս տևած տեսչական ստուգումների արդյունքում արձանագրվել էր 6300-ից ավել ապօրինի հատված ծառ, ինչի մասին զեկուցվել էր ՀՀ Նախագային և գործը ուղարկվել դատախազություն: Հայաստանի ղեկավարի կողմից ուժային կառույցներին և հսկողություն իրականացնող կազմակերպություններին խիստ հանձնարարական էր տրվել ուժեղացված միջոցառում-

ներ իրականացնել ապօրինի ծառահատումների դեմ: Ըստ Ա. Սինասյանի, ուժային կառույցների հետ համագործակցված արդյունավետ աշխատանք կա, բայց կան նաև բացեր և միջոցներ պետք է ձեռնարկվեն դրանց վերացման ուղղությամբ: Հիմնախարցի լուծման նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունը իր լիազորությունների շրջանակում իրականացրել է մի քանի մի քանի էական քայլեր՝ կատարվել են կադրային և կառուցվածքային բարեփոխումներ, որոնց շրջանակներում պաշտոններից ազատվել են ազգային պարկի տնօրենը, փոխտնօրենները և այլ պատասխանատուներ, 24 ժամյա ռեժիմի պահպանության համար ներգրավվել է «Պանտերա սեքյուրիթի» մասնավոր պահնորդական կազմակերպությունը, վերանայվել են աշխատակիցների որոշ լիազորություններ, որոնք կնպաստեն պահպանության և հսկողության ուժեղացմանը: «Աշխատանքներ են տարվել պարկին հարակից համայնքների բնակիչների հետ, որոնք դեռևս էական արդյունքներ չեն տալիս, բայց եթե հասարակության մոտ չձևավորվի անտառը սրբորեն պահպանելու գիտակցումը, մյուս գործողությունները արդյունավետ չեն լինի, այդ նպատակով համայնքների բնակիչների հետ պետք է ամենօրյա աշխատանքներ տարվեն: Անընդունելի է բնակիչների մի մասի մոտ գերակայող այն մոտեցումը, որ իրենք կարող են անտառն ապօրինի հատել՝ սեփական եկամուտները ապահովելու նպատակով և նարնց աջակցում են մարդիկ, ովքեր այդ ցանկությունները օգտագործում են ապօրինի բիզնեսով սեփական եկամուտներն ստանալու համար: Առավել ևս, որ հարակից համայնքների բնակիչները միշտ ապահովված են եղել թափուկով և տունը տաքացնելու խնդիր չեն ունեցել»,- շեշտել է նախարարը:



Ինչո՞ւ են գլխիվայր շրջել ամեն ինչ

Հոկտեմբերի 22-ին «Հայելի.ամ» կայքը իր էջում տեղադրեց «Արծվիկ Մինասյանը որպես ապրուստի միջոց խորհուրդ է տվել ճիճու պահել» վերտառությամբ նյութը, որը ակնհայտ անճշտություններից բացի պարունակում էր նաև ամիտ եզրակացություններ: Եվ սա զարմալի չէր, քանի որ երբ լրագրողը գրիչ է շարժում կանխակալ վերաբերմունքով, ապա ստիպված է գլխիվայր շուռ տալ ամեն ինչ: Ձեզ ենք ներկայացնում Բնապահպանության նախարարի խորհրդական Արծրուն Պեպանյանի պատասխան-պարզաբանումները նշված նյութի վերաբերյալ:

«Ինքս ժամանակին եղել եմ օրաթերթի գլխավոր խմբագիր, ու եթե իմ լրագրողը իրականությանը չհա-



մապատասխանող լուր տրամադրեր խմբագրությամբ, ապա ես կդադարեի օգտվել նրա ծառայությունից: Ու Հայելի.ամ կայքի խմբագրին խորհուրդ եմ տալիս մտորել կայքի հեղինակության մասին: Իսկ հիմա մատնացուցեմ սխալները»:

1. Տավուշի մարզի բնակիչների եւ բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանի օրեր առաջ կայացած հանդիպումն ընթացել է տհաճ մթնոլորտում:

- Հանդիպումը անցել է նորմալ մթնոլորտում, տավուշցիները խոսել են աշխատատեղերի բացակայությունից: Նրանց ասվել է, որ գործադիրի մյուս կառույցների հետ կմշակվեն սոցիալական վիճակը մեղմելու առաջարկներ ու կհանդիպեն բնակչությանը:

2. Այդ հրկիզումը տեղի ունեցավ այն բանից հետո, երբ հիշյալ տեղամաս էր այցելել նախարար Արծվիկ Մինասյանը եւ հանդիպել Շամախյան համայնքի բնակիչների հետ:

- Արծվիկ Մինասյանը չի հանդիպել Շամախյան համայնքի բնակիչների հետ: Նախարարն այդտեղ այցելել է հրդեհի մասին տեղեկանալուց հետո:

3. Սակայն Արծվիկ Մինասյանը հակադարձել է, որ անտառ հատելը հանցագործություն է, որ չեն կարողանում ապրել, թող ճիճու մշակեն, ինչ ուզում են անեն, բայց ոչ անտառ հատեն:

- Արծվիկ Մինասյանը «ճիճու մշակելու» առաջարկ չի արել:

4. Նա չի ընկրկել նույնիսկ շարքային բնակիչների փաստարկների դեմ, որ իրենց արգելում են, սակայն ավելի «թափով» մարդկանց, որոնք փայտամշակման գործարաններ ունեն, թույլատրում են:

- Նման հարց հանդիպման ժամանակ չի շոշափվել:

5. Մինասյանը Շամախյանից ուղեւորվել է Իջևան եւ այնտեղ էլ նույն բովանդակությամբ տհաճ զրույց է

ուներել, ինչին հաջորդել է տնակի հրկիզումը:

- Մինասյանը Շամախյանում չի եղել մինչև հրդեհումը և այնտեղից Իջևան ուղևորվել չէր կարող: Իջևանում նախարարը չէր կարող «նույն բովանդակությամբ տհաճ զրույց» ունենալ, քանի որ Իջևանում նախարարությանը ենթակա անտառներ չկան: Աշխատանքային օրվա ավարտից հետո նախարարն Իջևան մեկնել էր իր մտերիմներից մեկին հանդիպելու նպատակով և հանդիպումն անցել է նախանձելի ջերմ մթնոլորտում:

5. Ըստ ամենայնի՝ անտառի հարցն այս տարածքներում շարունակում է մնալ խնդրահարույց այն պարզ պատճառով, որ ոլորտի պատասխանատուները այդպես էլ չկարողացան հասկանալ մի պարզ իրողություն՝ չի կարելի հարցերը կարգավորել ընդամենը «ոչ» ասելով, պետք է լուծում տրվի այս համայնքների բնակիչների զբաղվածությանը:

- «Ոչը» ասում է ազգային պարկի մասին օրենքը և նախապայմաններ չի ընդունում:

6. Իսկ այն բանից հետո, երբ բողոքի դուրս եկած քաղաքացիները փակեցին միջպետական ճանապարհը, բնապահպանության նախարար Արծվիկ Մինասյանը, փոխանակ խնդրի մեջ խորամուխ լինելու անմիջապես հայտարարեց որ դա մի քանի անձանց կազմակերպած դավադրությունն է անձամբ իր նկատմամբ:

- Նախարարը երբեք չի ասել դա «դավադրությունն է անձամբ իր նկատմամբ»:

Հեփրդեհային իրավիճակը օրենսդիրների ուժադրության կենտրոնում



Ազգային ժողովի տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանության հարցերի մշտական հանձնաժողովում Վարդևան Գրիգորյանի նախագահությամբ հոկտեմբերի 11-ին տեղի է ունեցել աշխատանքային քննարկում անտառային հրդեհների և «Նաիրիտ» գործարանում բռնկված հրդեհից հետո ստեղծված իրավիճակի և ձեռնարկվող քայլերի վերաբերյալ: Ձեկույցներով հանդես են եկել ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Աշոտ Հարությունյանը, ՀՀ բնապահպանության նախարարության բնության հատուկ պահպանվող տարածքների և դեմոկրոպարկերի կառավարման բաժնի պետ Արամ Աղասյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալ, փրկարար ծառայության գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանը և ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը: Արամ Աղասյանը, ներկայացնելով «Խոսրովի անտառ» պետական արգելոցում հրդեհի բռնկման ու տարածման ժամանակագրությունը, վնասված տարածքների չափը, ասել է, որ այրված տարածքներում բազմաթիվ են չվնասված կղզյակները, որոնք ոչ միայն ծառայել են իբրև ապաստան կենդանիների համար, այլև հետագայում կնպաստեն կենսաբազմազանության արագ վերականգնմանը: 2200 հեկտար ընդհանուր տարածքից չի վառվել միայն 365 հեկտարը:

Ըստ բանախոսի՝ քանու հետևանքով արագ տարածված կրակը մեծավնասամբ չի վնասել բույսերի արմատային համակարգը և հրդեհից արդեն 20 օր անց վերականգնվել են որոշ ծառատեսակներ: Գեներալ-մայոր Վրեժ Գաբրիելյանը զեկույցել է, որ քննարկվել են հրդեհների առաջացման հնարավոր պատճառները, և մարդկային ու կլիմայական գործոնները բացառելու նպատակով կարևորվել է կանխարգելիչ միջոցառումների իրականա-

ցումը: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքների պահպանությունն ուժեղացնելու նպատակով բանախոսն առաջնահերթ է համարել մուտքի և ելքի ճանապարհների ու արահետների զինումը տեսախցիկներով՝ հետագա հնարավոր հրդեհների առաջացման մոնիթորինգ կազմակերպելու նպատակով: Վրեժ Գաբրիելյանի խոսքով, արգելոցում հրդեհի առաջացման համար նպաստավոր պայմաններ է ստեղծել շոգ եղանակը, ինչի հետևանքով խոտածածկ տարածքն իսպառ խոնավազրկվել է: Ձեկույցողները փաստել են, որ հրդեհի և դրան հաջորդած հետմարման ժամանակ 24 օրերի հիմնական բացերից մեկը կապի միջոցների բացակայությունն է եղել, որն առաջիկայում մտադիր է կարգավորել ՎիվաՍել-ՄՍՍ ընկերությունը և ներկայում այնպիսի կապի համակարգ է դիտարկվում, որով արգելոցում նվազագույն միջամտությամբ կապահովվի օդային կապ, ինչն իր հերթին կօգտագործվի ոչ միայն հրդեհների կանխարգելման, այլ նաև մոնիթորինգ իրականացնելու համար: Աշխատանքային քննարկման ժամանակ զեկույցողներն անդրադարձել են նաև «Նաիրիտ» գործարանում վթարի առաջացման հնարավոր պատճառներին և առկա խնդիրներին: ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմի փրկարար ծառայության տնօրենի տեղակալը իրազեկել է գործարանում ռեզերվների հովազման համակարգի բացակայության մասին և կարևորել «Նաիրիտ»-ի տարածքում նախկինից մնացած թունաքիմիկատների հավաքումն ու պահեստավորումը, հանրապետությունում առկա հնարավորությունների օգտագործմամբ դրանց ոչնչացումը: Աշխատանքային քննարկման ընթացքում հանձնաժողովի անդամները հանդես են եկել բազմաթիվ հարցադրումներով, որոնց տրվել են սպառիչ պատասխաններ:

Տեղեկացնում է Բնապահպանության և ընդերփ տեսչական մարմինը

Բնապահպանության և ընդերփ տեսչական մարմնի տարածքային ստորաբաժանումների կողմից 2017 թվականի հոկտեմբերի 9-13-ն ընկած ժամանակահատվածում կատարված շրջայցերի արդյունքում հայտնաբերվել է՝

- ապօրինի ծառահատման և փայտանյութի տեղափոխման 14 դեպք,
- մթնոլորտային օդի պահպանության, թափոնների տեղաբաշխման պահանջների խախտման 6 դեպք,
- ապօրինի որսի (խեցգետին, ձուկ, կաքավ, լոր) 5 դեպք,
- հողի օգտագործման և պահպանման պահանջների խախտման 2 դեպք,
- բուսական աշխարհի պահպանության և օգտագործման պահանջների խախտման 2 դեպք:



Արձանագրված թվով 29 իրավախախտումների դեպքերից 13-ով անցկացվել է քննություն, որոնցով նշանակվել 1.210.000 ՀՀ դրամի վարչական տուգանք:
 16 գործ դեռևս գտնվում է ընթացքի մեջ:
 Ընդհանուր առմամբ բնապահպանական իրավախախտման հետևանքով շրջակա միջավայրին հասցված վնասի չափը կազմել է 1.414.900 ՀՀ դրամ:
 Ընդհանուր գանձվել է 1.140.700 ՀՀ դրամ:

Ինչդիսի դրամաճնորհային ծրագրեր կան 2017թ.

2017 թվականին կնքվել է 5 դրամաճնորհային պայմանագիր 21,85 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր գումարով, որոնց իրականացումը նախատեսվում է առաջիկա 5 տարիների ընթացքում, այդ թվում՝

- 2017 թվականի հուլիսի 4-ին կնքվել է Կովկասի Բնության հիմնադրամի կողմից «Ձանգեգուր» կենսոլորտային համալիրե ՊՈԱԿ-ի աջակցության մեկամյա դրամաճնորհային պայմանագիր 50,0 հազ եվրո աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ,
- 2017թ. հուլիսի 7-ին ստորագրվել է Կանաչ կլիմայի հիմնադրամի «Շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղված ներդրումների ռիսկերի նվազե-

ցում և մասշտաբավորում» ծրագրային փաստաթուղթը, որը նախատեսում է 20,0 մլն. դոլարի ներդրում.:

- 2017թ. օգոստոսի 18-ին լրացուցիչ կնքվել է Կովկասի Բնության Հիմնադրամի կողմից «Խոսրովի անտառ» պետական արգելոցե ՊՈԱԿ-ի աջակցության արտակարգ դրամաճնորհային պայմանագիր՝ 5 մլն. դրամ գումարով,
- 2017թ. սեպտեմբերի 12-ին ՀՀ բնապահպանության նախարարության և Հայաստանում ՄԱԿ-ի մշտական ներկայացուցչության միջև ստորագրվել է Ռուսաստանի Դաշնության ֆինանսական աջակցությամբ «Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մեղմումն անտառային և դաշտային հրդեհների կառավարման ներուժի զարգացման միջոցով» եռամյա ծրագրի փաստաթուղթը՝ 1,0 մլն. ԱՄՆ դոլար արժողությամբ:
 • Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմց հատկացվել է 790,0 հազ. դոլար՝ փոքր դրամաճնորհային ծրագրերի իրականացման նպատակով:



«Մաքուր Հայաստան» համադեռական շաբաթօրյակը Բնապահպանության նախարարության իրականացրած

«Մաքուր Հայաստան» համապետական միջոցառման շրջանակներում հոկտեմբերի 21-ին հայտարարված համապետական շաբաթօրյակին մասնակցել են ՀՀ Բնապահպանության նախարարության աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենտրոնական ապարատի և տարածքային բաժինների աշխատակիցները: Նախարարության աշխատակազմի և Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կենտրոնական ապարատի աշխատակիցները

մաքրել են «Արաբկիր զբոսայգու» տարածքը: «Խոսրովի անտառ» պետական արգելոցի, «Սևան», «Դիլիջան», «Արփի լիճ» ազգային պարկերի, «Ջանգեզուր» կենսոլորտային համալիրի և «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի աշխատակիցները մաքրման աշխատանքներ են իրականացրել բնության հատուկ պահպանվող տարածքների առավել աղտոտված հատվածներում, հարակից համայնքների հետ սահմանագծերում, վարչական շենքերին կից տարածքներում:



Էկոլոթական բաց դաս և բնադասերի արարում «Ջրվեժ» անտառապարկում

Օ անոս Թերլենեգյանի անվան գեղարվեստի քոլեջի տարբեր կուրսերի մոտ 50 սան հոկտեմբերի 21-ին այցելել են ՀՀ Բնապահպանության նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայության ներքո գտնվող «Ջրվեժ» անտառապարկ: Միջոցառումն անցկացվել է «Բնապահպանական խճանկար» խորագրի ներքո: Էկոլոթական բաց դասը վարել է «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի գիտության զծով տեղակալ Ա. Խալաթյանը: Անտառապարկի սաներին ներկայացվել է հայրենի հարուստ բնաշխարհի առանձնահատկությունները, ինչպես նաև՝ դենդրոպարկերի դերը ֆլորայի պահպանության գործընթացներում: Դասախոսությունից հետո գեղարվեստի քոլեջի սա-



ներն իրենց շրջապատող աշնանային գունագեղ բնապատկերները հանձնել են կտավներին:

Քոլեջի սաները «Մաքուր Հայաստան» համապետական միջոցառումների շրջանակում մաքրել են «Ջրվեժ» անտառապարկի որոշ տարածքներ:

Միջոցառման ավարտին Գեղարվեստի քոլեջի որոշ սաներ իրենց աշխատանքները նվիրել են Արգելոցապարկային համալիրին:

Ինչդիսին կլինի շրջակա միջավայրին նվիրված ցուցասրահը



Ցուցահանդես նվիրված Հայաստանին և հայ ժողովրդի մեծերին



ԼԼ Բնապահպանության նախարարի տեղակալ Խաչիկ Հակոբյանը հանդիպել է «Ինտերնացիոնալ արտ» ընկերության ներկայացուցիչ Մարիկա Փարսադանելլիին, ով Հայաստան է ժամանել «Ես Հայաստանն եմ - մեծ մշակույթ» նախագծի շրջանակներում: Մշակույթի և արվեստի ոլորտում միջազգային ծրագրերի մասնագետը տեղեկացրել է, որ համաշխարհային խոշոր SILA SVETA (Լոս Անջելես) կազմակերպության հետ կազմակերպվում է մուլտիմեդիա ձևաչափով ցուցահանդես՝ նվիրված Հայաստանին և հայ ժողովրդի մեծերին: Ցուցահանդեսում նախատեսված է մաև Հայաստանի շրջակա միջավայրին նվիրված ցուցասրահ և հյուրը խնդրել է աջակցել վերջինիս ձևավորման և համապատասխան

տեղեկատվության տրամադրման հարցում: Փոխնախարար Խաչիկ Հակոբյանը ողջունել է ծրագրի գաղափարը և շեշտել, որ Հայաստանի մասին ամբողջական պատկերացում ձևավորելու համար հարուստ բնաշխարհի ներկայացումն անհրաժեշտություն է: Նախարարի տեղակալը գերատեսչության անունից պատրաստակամություն է հայտնել տեխնիկական և տեղեկատվական աջակցություն ցուցաբերել բնապահպանական սրահի ձևավորման հարցում՝ առավել ևս, որ ցուցահանդեսը կազմակերպվելու է հայկական սփյուռքի մեծ գաղթօջախներ ունեցող բոլոր երկրներում, ինչը հնարավորություն կընձեռնի Հայաստանի հարուստ կենսաբազմազանության վերաբերյալ մեծածավալ իրազեկում իրականացնել, որն էլ իր հերթին կխթանի էկոլոգոսաշրջությունը մեր երկրում:

Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել հետագա աշխատանքները կազմակերպել հստակ տեխնիկական առաջարկների շուրջ:

Նախագիծը՝ Արծրուն Պետանյանի
խմբագիր՝ Սանվել Սկրչյան
Ձևավորումը՝ Նարինե Բաղդասարյանի
Նյութերը՝ ՀՀ ԲՆ Տեղեկատվության և հասարակության հետ կապերի վարչության

Հեռախոս՝
011 818 517